



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հետարարութիւն Պ. Ա. Տիգրանի.

Կոմս Լ. Ա. Յուրսոյ.



# ԵՂ ԿԱՅ ՍԵՐ, ԱՅՆՏԵՂ Է ԵՒ ԱՍՏՈՒԱԾ




Թարգմ. Միանրել Պատշիրնեանց.



ԱՐԴՅՈՒՆՎՐԱՊՅՈՒՆ  
առաջնահայրապետ  
առաջնահայրապետ Ա. Ա. Մալխանեանցի.

1905

79  
80



23 SEP 2013

50/1  
Մարտախն տիկին Նունե Քայանքարի յիշասակին նույն  
ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅԱՆԹԱՐԻՑ  
Տառամալիքին Ա. Եղիկյանի.

25 NOV 2010

891.71

S-80

Ա. Յ.

Կոմս Լ. Ն. Ցոլսոյ



## ՈՐՏԵՂ ԿԱՅ ՍԵՐ, ԱՅՆՏԵՂ Է ԵՒ ԱՍՏՈՒԱԾ:



Թարգմ. Միսարեզ Մարտիրոսյանց.



Ա. Ա. Վահագին  
Տպարան Ա. Ա. Մարտիրոսյան

1905

14176

ՕՐԵ ՎՈՐԵ



Քաղաքում բնակվում էր կոշկակար Մարտին Ավդեմը. Նա բնակվում էր մի հատ լուսամուտ ունեցող ներքնատան մէջ. Լուսամուտը նայում էր դէպի փողոց և ներսից երեսում էր թէ ինչպէս են անցնում մարդիք, թէև երեսում էին միմիայն անցնողների ոտքերը, բայց Մարտին Ավդեմը կոշիկներիցն էլ կարողանում էր ճանաչել մարդկանց. Մարտին Ավդեմը շատ երկար ժամանակ էր որ բնակվում էր միւնոյն տեղը և ծանօթներ շատ ունէր. Այն քաղաքամասում որտեղ բնակվում էր Ավդեմը, հազիւ կլինէր այնպիսի զոյգ կոշիկ, որ մի կամ երկու անգամ նրա ձեռքին անցած չլինէր. Որի քանդուածն էր կտրում, որին կարկատան գցում, մի մի անգամ էլ պատահում էր, որ կիսով չափ նորոգում էր: Եւ յաճախ լուսամուտից տեսնում էր իւր աշխատածը: Գործ միշտ շատ ունէր, որովհետեւ Ավդեմը պինդ էր կարում, կաշի էլ լաւն էր գործածում, գինն էլ աւել չէր վերցնում և խօսքին էլ հաստատ էր: Եթէ կարող էր ժամանակին պատրաստել, վերցնում էր գործը, չէր խաբում, առաջուց ասում էր: Ամենքը գիտէին Ավդեմի բնութիւնը

Дозволено Цензурою, Тифлисъ 22-го Декабря 1904 г.

և ամեն կողմից գործ են յանձնում նրան, Ավ-  
գէիչը միշտ էլ լաւ մարդ էր, բայց ծերութեանը  
մօտենալով սկսեց աւելի հոգու մասին մտածել  
և աւելի Աստուծուն մօտենալ: Դեռ քանի որ  
Մարտինը ուրիշի մօտ էր ծառալում, այնժամա-  
նակ վախճանուեց նրա կինը, որից յետոյ մնաց  
մի երեք տարեկան տղալ: Դրանց երեխալքը չե-  
ին ապրում: Մեծերը աւելի առաջ վախճանուե-  
ցան: Առաջ Մարտինը ուզումէր որդուն գիւղը  
ուղարկել իւր քըոջ մօտ, յետոյ խղճաց, մտածեց,  
գժուար կլինի Կապիտօշկիս օտար ընտանիքում  
մեծանալ. կթողնեմ մօտս: Եւ հեռացաւ Ավ-  
գէիչը իւր տիրոջից ու սկսեց իւր տղայի հետ  
ջոկ տան ապրել: Բայց Աստուած չթողեց Ավ-  
գէիչին որդկերանցով բաղդաւորվել: Հենց որ  
տղէն քիչ մեծացաւ և սկսեց օգնել հօրը և ու-  
րախացնել, այդ միջոցում հիւանդացաւ Կապիտօշ-  
կէն, պարկեց մի շաբաթ և մեռաւ: Թաղեց որդուն  
Մարտինը և յուսահատվեց: Այնպէս յուսահատ-  
վեց, որ սկսեց Աստուծոյ վրայ տրտնջալ: Այնպիսի  
նեղութեան մէջ ընկաւ Մարտինը, որ Աստուծուց  
մահ էր խնդրում և արհամարհում էր Աստուծուն  
նրա համար, որ իւր սիրելի միակ որդուն սպա-  
նեց, իսկ իրան ոչ: Դադարեց Ավգէիչը և եկե-  
ղեցի գնալ: Միանդամ եկաւ Ավգէիչի մօտ իւր-  
եանց գիւղացի մի ծերունի, խօսեց նրա հետ

Ավգէիչը և սկսեց իւր վշտերը գանգատվել:  
Մարդ Աստուծոյ, ասաց նրան, էլ ապրել բոլո-  
րովին չեմ վափագում. այլ միմիայն Աստուծուց  
մահ եմ խնդրում, յուսահատ մնացել եմ:

Ծերունին ասաց նրան, լաւ չես խօսում,  
Մարտին, մեզ չի կարելի Աստուծոյ գործերը դա-  
տել: Ոչ թէ մեր խելքով, այլ Աստուծոյ կամքով  
նա վախճանուեց, իսկ դու ապրումես: Նշանակու-  
մէ այդպէս լաւ է: Բայց քոյ յուսահատութիւնը  
նրա համար է, որ դու քոյ ուրախութեան հա-  
մար ես ուզում ապրել:

Ապա էլ ընչու համար է ապրելը, հարցըց  
Մարտինը:

Ծերունին ասաց: Աստուծոյ համար պէտքէ  
ապրել Մարտին: Նա քեզ կեանք է տալիս, նրա  
համար էլ պէտքէ ապրել: Երբոր կօկսես նրա  
համար ապրել, այնժամանակ ոչինչ բանի հա-  
մար չես նեղանալ և ամեն բան թեթև կթուի  
քեզ: Լուեց Մարտինը և ապա խօսեց:

«Իսկ Աստուծոյ համար ինչպէս պէտքէ ապրել»

Ծերունին ասաց, թէ Աստուծոյ համար  
ինչպէս պէտքէ ապրել, այդ Քրիստոսը մեզ ցոյց  
տվեց: Դու գիտես կարգալ: Գնիր Աւետարան և  
կարդալ, անտեղ կհասկանաս, ինչպէս ապրել  
Աստուծոյ համար: Այնտեղ ամենը ցոյց է տուած»

Այդ խօսքերը ընկան Ավգէիչի սիրտը: Եւ

Հենց նոյն օրը գնաց և գնեց իւր համար, խոշորա-  
տիպ նոր Կտակարան և սկսեց կարդալ:

Ավելիչը մտադիր էր միայն տօներին կար-  
դալ, բայց որ սկսեց կարդալ՝ այնպէս լաւ զգաց  
իւրեան, որ շարունակեց ամեն օր կարդալ: Մի  
մի անգամ այնպէս խորասուզվում էր կարդալում,  
որ ճրագի իւղը վերջանում էր և դարձեալ գլոր-  
քից պոկ գալ չէր կարողանում: Այդպէս սկսեց  
կարդալ Ավելիչը ամեն գիշեր: Եւ քանի շատ էր  
կարդում, այնքան պարզ հասկանում էր թէ Աս-  
տուած նրանից ինչ է կամենում և թէ ինչպէս  
պէտքէ Աստուծոյ համար ապրել, և հետզհետէ  
սրտի վերայ թեթևութիւն էր զգում: Լինում էր  
առաջ, երբ պարկումէր քնելու, միշտ հառաչում  
էր, յուգոց էր հանում և իւր Կապիտօշկին յի-  
շում, բայց այժմ միայն ասում էր, փառք Քեզ,  
փառք Քեզ Տէր, Քոյ կամքնէ: Եւ այդ ժամա-  
նակից Ավելիչը կեանքը փոխվեցաւ: Առաջ տօ-  
ներին մտնումէր պանդոկ թէլ խմելու և թունդ  
խմբներին էլ չէր մերժում: Խմումէր ծանօթ  
մարդկանց հետ եղուրս գալիս, թէկուզ ոչ ար-  
բած, բայց ուրախ գրութեան մէջ սկսում էր դա-  
տարկաբանութիւններ անել և մարդկանց բամ-  
բասել: Այժմ այդ բոլորը իրանք իրանց հեռա-  
ցան դրանից: Դրա կեանքը դարձաւ խաղաղ և  
երջանիկ: Առաւոտից նստում էր գործին և ամ-

բողջ օրը աշխատում, երեկոյեան կվառէր ճրագը  
կդնէր սեղանի վերայ, պահարանից վերցնում  
էր գիրքը նստում և կարդում: Եւ քանի շատ  
էր կարդում, այնքան շատ էր հասկանում,  
այն էլ պարզ և ուրախանումէր:

Մի անգամ պատահեց որ, երբ ուշ գիշերով  
Մարտինը կարդումէր Աւետարանը, կարդաց Ղու-  
կաս Աւետարանչի գրած վեցերրորդ գլուխը,  
որտեղ գրվածէ: «Որ հարկանէ զծնօտ քն՝, մատո  
նմա և զմիւնն, և որ հանէ 'ի քէն գբաճկոն  
քն՝, մի արգելուր 'ի նմանէ և զշապիկն: Ամենայ-  
նի որ խնդրէ 'ի քէն՝ տուր, և զոր ինչ հանէ  
ոք 'ի քէն՝ մի պահանջեր: Եւ որպէս կամիք  
թէ արացեն ձեզ մարդիկ, այնպէս արասցիք  
և դուք նոցա»:

Ճարունակեց կարդալ՝ որտեղ տէրը ասումէ:

„Զի կոչէք զիս Տէր Տէր, և զոր ասեմն  
ոչ առնէք: Ամենայն օր գալ առիս և լսէ  
զբանս իմ և առնէ զնոսա, ցուցից ձեզ ում  
նման է: Նման է առն՝ որ շինիցէ տուն, որ  
փորեաց և խորեաց, և եղ հիմն ի վերայ վիմի,  
'ի յառնել հեղեղաց՝ բաղիսեաց գետ գտունն, և  
ոչ կարաց շարժել զնա. զի հաստատեալ էր հի-  
մըն 'ի վերայ վիմի: Իսկ որ լսէ զբանս իմ և ոչ  
առնէ, նման է առն՝ որ շինիցէ 'ի վերայ հողու  
առանց հիման. զոր բաղիսեաց գետ, և փաղ-

վաղակի անկաւ և եղե կործանումն տանն  
ալնորիկ մեծ“:

Կարդաց Ավգեհչը այդ խօսքերը և հոգւով  
ուլսխացաւ: Վերցրեց ակնոցները, դրեց դրքի  
վերայ, թիկն տվեց սեղանին և ընկաւ մտածմանց  
մէջ: Սկսեց համեմատել իւր կեանքը այդ խօս-  
քերի հետ: Մտածումէր ինքն իրան:

«Արդեօք իմ տունը քարի վերայ է թէ՝ հո-  
ղի: Լաւ է թէ քարի վրայ է: Որքան թեթե-  
ռութիւն է զգում մարդ, երբ միայնակ է նստած.  
կարծումէ թէ Աստուծոյ ամեն պատուէրները  
կատարեց, բայց մի փոքր շեղուեցար և դարձ-  
եալ մեղանչումես: Ալսպէս կշարունակեմ ասաց,  
ալսպէս շատ լաւ է: Տէր ինձ օգնիր:»

Մտածեց ալդպէս, կամենումէր պարկել,  
բայց գիրքը թողնել ափասումէր: Եւ սկսեց  
եօթները գլուխը ևս կարդալ: Կարդաց հար-  
իւրապետի մասին, կարդաց այրի կնոջ օրդոյ մա-  
սին, կարդաց Յովհաննու աշակերտներին տված-  
պատասխանի մասին և հասաւ այնտեղ, որտեղ  
հարուստ փարիսեցին Տիրոջը հրաւիրեց իւր-  
տուն, և կարդաց նրա մասին թէ ինչպէս մե-  
ղաւոր կինը օծեց նորա ոտքերը և արտասու-  
քով թրջեց և ինչպէս արդարացրեց նրան: Հա-  
սաւ մինչ 44-երը որդ տունը և կարդաց:

«Եւ դարձեալ ՚ի կինն կողմն ասէ յՍիմովն»

տեսանթս զալս կին, մտի իտուն քո՛ ջուր ոտից  
իմոց ո՛չ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք  
եթաց զոտս իմ, և հերով իւրով ջնջեաց: Համ-  
բոյր մի դու ոչ ետուր մնձ. սա ահաւասիկ յոր-  
մէ հետէ մտեալ եմ, ոչ զադարեաց ՚ի համբու-  
րելոյ զոտս իմ: Իւզով զգլուխ իմ ո՛չ օծեր, սա  
իւզով անուշիւ է օծ»: Կարդաց նա ալս տունը  
և մտածումէ:

„Ոտքերիս համար ջուր չտվեցիր, չհամբու-  
րեցիր, զլուխս իւզով չօծեցիր“:

Կրկին վերցրեց ակնոցները Ավգեհչը դրեց  
զրքի վերայ և ընկաւ մտածմանց մէջ:

«Ինձ տեսակ է եղել, ինչպէս երևումէ, փա-  
րիսեցին. ինչպէս ես միայն ինձ համար եմ մտա-  
ծում, որ տաք տանը թէլ խմեմ, իսկ հիւրի մա-  
սին չեմ հոգս քաշում, չեմ մտածում: Իսկ ով է  
հիւրը: Ինքը տէրը: Եթէ ինձ մօտ գար մթթէ  
ես ալդպէս կանէիք:

Երկու ձեռքերի վրայ յենվեց Ավգեհչը և  
էլ չիմացաւ թէ ինչպէս քունը տարաւ:

Մարտին, յանկարծ ինչոր շշնչաց նրա  
ականջի մօտ: Արթնացաւ սարսափած Մարտինը:  
«Թվ է ալստեղ:

Դարձաւ, նայեց դէպի գուռը, ոչոք չկար:  
Կրկին ննջեց. յանկարծ պարզ լսումէ:

Մարտին, Մարտին, նայիր վաղը փողո-

ցում, —կգամ:

Զարթնեց Մարտինը, բարձրացաւ սեղանից, սկսեց աչքերը տրորել: Ինքն էլ չէր հասկանում երազումն, թէ յայտնապէս էր լոռմ այդ խօսքերը: Հանդցրեց ճրագը և պարկեց քնելու:

Առաւօտը վաշ վերկացաւ Ավդէիչը, ազօթեց Աստուծուն, վառարանը վառեց, վրան դրեց ապուրը, կրակ ածեց ինքնաեռում, գոգնոցը կապեց և նստեց լուսամուտի առաջ աշխատելու: Նստեց Ավդէիչը աշխատումէր և ինքնիրան անցած գիշերուան մասին էր մտածում: Չէր կարողանում բացատրել, էնպէս երեակալեց թէ ճիշտ ձայն լսեց:

Նստած է Մարտինը լուսամուտի մօտ, բայց ալնքան չէր աշխատում, ինչքան լուսամուտից էր նայում, և եթէ անցնումէր մէկը անծանօթ կոշիկներով, կռանումէր որ ինչէ գէմքն էլ տեսնի: Անցաւ դռնապանը նոր թաղիքէ կոշիկներով, անցաւ և ջրկիրը, յետոյ ծեր զինւորը հին կոշիկներով թիակը ձեռքին: Կոշիկներից նանաչեց Ավդէիչը նրան: Ծերի անունն էր Ստեփանիչ և բնակվումէր Հարեան վաճառականի տանը ձրի, և գրա համար էլ օգնում էր դռնապանին: Ակսեց Ստեփանիչը Ավդէիչի պատուհանի դիմացը մաքրել ձիւնը: Նայեց նրան Ավդէիչը և կրկին շարունակեց իւր գործը: Մի տես

է, երեսի ծերութիւնից լիմարացելեմ, —սկսեց իւրեան ծաղրել Ավդէիչը: —Ստեփանիչը ձիւն է մաքրում, իսկ ես կարծում եմ թէ Քրիստոսն է ինձ մօտ գալիս: Բոլորովին ցնորվելես ծեր գլուխ:

Միքիչ դարձեալ կարեց Ավդէիչը, և կրկին կամեցաւ լուսամուտից նայել: Նայեց կրկին և տեսնում է Ստեփանիչը թիակը գրեց պատի մօտ, և ինքը կարծես հանդստանում է թէ տաքանում:

«Ծեր մարդ է, երեւում է ոյժը կորցրել է, որ ձիւն ժողովելու կարողութիւն էլ չունի, մտածեց Ավդէիչը: Չըիմացնել արդեօք դրան թէր, ինքնաեռն էլ ուզում է հանդչել»:

Յցեց ասեղը Ավդէիչը. վերկացաւ, ինքնաեռը դրեց սեղանի վրայ, ածեց թէլ և մտածի խփեց լուսամուտի ապակուն: Ստեփանիչը լետ նայեց և մօտեցաւ լուսամուտին: Ավդէիչը կանչեց նրան և գնաց դուռը բանալու:

«Ներս մտիր տաքացիր, ասաց նրան, երեսի մրսեցիր:

«Քրիստոսը քեզ փրկի, ոսկորներս էլ կոտրատվում են, ասաց Ստեփանիչը:

Ներս մտաւ Ստեփանիչը, թափ տվեց վրայի ձիւնը, սկսեց ոտքերը մաքրել, որ յատակը շապականի, իսկ ինքը տատանվում էր:

«Մի աշխատիր մաքրելու, ես կմաքրեմ, մեր արհեստը այդպիսի է, անցիր նստիր, ասաց Ավ-

Դէիչը: Ահա թէլ, խմիր:

Ավգէիչը լցրեց երկու բաժակ, մինը գրեց  
հիւրի առաջ, իսկ ինքը իւրեանը տծեց ափաէի վրայ  
և սկսեց փշել որ շուտով սառչի:

Ստեփանիչը խմեց իւր բաժակը, գրեց  
գլխիվայր և վրէն դրեց շաքարի մնացորդը ու  
շնորհակալութիւն ասեց, բայց երեսումէր որ էլի  
էր ուզում, Խմիր դարձեալ, ասաց Ավգէիչը և  
լցրեց թէ իւր և թէ հիւրի բաժակը:

Խմումէ Ավգէիչը իւր թէլը և միշտ դէպի  
փողոց է նայում:

«Երեի մէկին սպասում ես? Հարցրեց հիւրը:

«Ռւմն եմ սպասում, ասելն էլ ամաչում եմ,  
թէ ումն եմ սպասում: Սպասում եմ, չեմ սպա-  
սում, բայց մի խօսք ընկաւ սրտումս: Տեսիլք էր,  
թէ էնպէս՝ ինքս էլ չգիտեմ: Գիտես ինչ է եղ-  
բայր. էրէկ կարդացի Աւետարանում Քրիստոսի  
մասին, թէ ինչպէս տանջուեց, երբ շրջում էր  
երկրի վրայ: Երևի լսածես:

«Լսածեմ, լսած, պատասխանեց Ստեփանիչը,  
մենք տգէտ մարդիկ ենք գիր, չգիտենք:

«Կարդացի նոյնպէս թէ, ինչպէս նա երկրի  
վերալ շրջում էր, կարդացի ես գիտես, ինչպէս  
նա փարիսեցու մօտ գնաց, բայց Նրան լաւ չգի-  
մաւորեցին: Կարդացի էրէկ, եղբայր իմ. գրա  
մասին և մտածեցի, ինչպէս Տէր Քրիստոսին

արժանի պատով չլնդունեց: Օրինակի համար.  
Եթէ ինձ կամ ուրիշին հանդիպէր, ովէ իմանում  
ինչպէս պատով ընդունէինք: Ահա ալդպէս  
մտածում էի, և սկսեցի նիրհել, այդ ժամանակ  
լսում եմ, որ անունս են կանչում, վերկացայ, ձայն  
եմ լսում, որպէս թէ մէկը կամացուկ ասում է,  
սպասիր, վաղը կդամ: Այդպէս մինչ երկու ան-  
գամ, հաւատում ես, այդ ընկաւ մտքումս և ինքս  
ինձ անարգում եմ և միշտ սպասում եմ Նրան,  
Տիրոջը:

Ստեփանիչը գլուխը շարժեց և ոչինչ շա-  
սաց, գատարկեց բաժակը և ցած գրեց, Ավգէիչը  
նորից լցրեց բաժակը:

«Անուշ արա: Երբոր Տէրը շրջում էր երկրի  
վերայ, ոչոքից չէր զզվում, աւելի հասարակ ժողո-  
վրդի հետ էր լինում: Աշակերտներ ես ընտրում-  
էր աւելի մեզ պէս մեղաւոր բանւորներից:  
Ասումէ, ով բարձրացնումէ իրան, կցածնալ, և  
ով իրան ցածացնումէ՝ կբարձրանալ: Դուք ինձ  
Տէր էք անուանում, իսկ ես, ասումէ, ձեր ոտ-  
քերը կուանամ: Ով կամենումէ, ասում է, առա-  
ջինը լինել, նա կլինի ամենքին ծառալ: Որովհե-  
տե ասումէ, արքայութիւնը աղքատների, իսո-  
նարհների և ողորմածներինն է:

Մոռացաւ իւր թէլը Ստեփանիչը ինքը ծեր  
և փափկասիրտ մարդ էր: Նսոած, լսում էր և

աչքերից արտասուլք թափում:

«Կրկին խմիր, ասաց Ավգեհէջը: Բայց Ստեփանիչը երեսը խաչակնքեց, շնորհակալութիւն ասեց, բաժակը յետ քաշեց և վերկացաւ:

«Նորհակալ եմ քեզնից, Մարտին Ավգեհէջ, ասաց, հիւրասիրեցիր դու ինձ, թէ հողիոր և թէ մարմնով կշացրիր:

«Ուրիշ անգամ էլ համեցէք, շատ ուրախ եմ հիւրի համար, ասաց Ավգեհէջը:

Ստեփանիչը գնաց, իսկ Մարտինը լցրեց վերջին բաժակը խմեց, ժողովեց բաժակները և կրկին նստեց լուսամուտի մօտ աշխատելու: Կարում է կոշիկը և միշտ լուսամուտում նայում, Քրիստոսին սպասում, միշտ նորա և նորա գործերի մասին մտածում:

Անցան փողոցով երկու զինւոր, մէկը արքունական, իսկ միւսը իւր սեփական կոշիկներով. յետոյ անցաւ մաքրած կրկնակոշիկներով հարեւան տան տէրը, անցաւ հացավաճառը զամբիւղով: Ոհա լուսամուտի մօտից անցաւ մի կին բուրդէ գուլբաներով և գիւղական հողաթափներով: Անցաւ լուսամուտի առաջով, կանգնեց պատի մօտ:

Նայեց նրան Ավգեհէջը, տեսաւ որ կինը օտարական է, վատ հագնված և երեխէն գրկած, կանգնեց նա պատի մօտ մէջքը դէպի հողմը և փաթաթում է երեխալին. իսկ ուղիղ փաթաթելու

բան էլ չունէր: Կնոջ հագուստը ամառալին էր և պատառուտած: Լուսամուտից լսումէ Ավգեհէջը, երեխան գոռում է և նա գուրգուրում է, բայց լռեցնել չէ կարողանում: Վերկացաւ Ավգեհէջը դուրս գնաց դռնից, բարձրացաւ սանդուղքը և ձայն տվեց:

— «Խելացի, այ խելացի?

Կինը լսեց և յետ նայեց:

«Խնչես երեխայով այդ ցրտումը կանգնել, մտիր սենեակ, տաք տեղը աւելիլաւ կը փաթաթես դրան, արի ներս: Զարմացաւ կինը, տեսնումէ, ծեր մարդը գոզնոցը կապած, ակնոցները քթին, կանչումէ իրան: Գնաց նրա յետելից:

Ցած գնացին, մտան սենեակ, ծերը մօտեցրեց կնոջը մահճակալին: «Այստեղ, ասաց, նստիր. խելացի, վառարանին մօտիկ, կտաքանաս և մանկանդ կկերակրես:

«Ծծերումս կաթ չունիմ, ինքս էլ առաւօտից ոչինչ չեմ կերել, ասաց կինը, Բայց դարձեալ մօտեցրեց մանկանը ծծին:

Գլուխը շարժեց Ավգեհէջը, գնաց սեղանի մօտ, հանեց պահարանիցը հաց, ամանը լցրեց ապուրից, ցած բերեց պատից կախած անձեռ ոցիկը և այդ ամենը գարսեց սեղանի վերա:

«Նստիր, ասաց, կեր, իսկ երեխալի մօտ ես կնստեմ, ես էլ եմ ունեցել երեխալք, գիտեմ

պահելը:

Երեսը խաչ հանեց կինը, նստեց սեղանի մօտ  
և սկսեց ուտել, իսկ Ավդէիչը նստեց մահճակալի  
վրայ երեխի մօտ: Երեխան լալիս է, իսկ Ավդէիչը  
չի կարողանում լռեցնել: Մտածեց Ռվդէիչը մա-  
տով վախեցնել, շարժում էր մատը մինչ բերանը  
և յետ տանում, բերանում չէր տալիս, որովհետեւ  
մատնեը սև ունէր կոշկաներկով ապականուած,  
նայեց նայեց մատին երեխան և լռեց, իսկ յետոյ  
սկսեց, ծիծաղել: Ավդէիչն էլ ուրախացաւ: Իսկ  
կինը ուտում է և պատմում, թէ ինքը ով է և ուր  
է՞ր գնացել:

«Այս ութերորդ ամիսն է, ասաց, ամուսնուս  
զինւոր տարան. համբաւ էլ չունիմ խոհարարուհի  
էի, ծնեցի և երեխայով էլ չպահեցին: Ահա եր-  
րորդ ամիսն է առանց գործի շրջումեմ: Ինչ ունէի  
ամենը կերայ: Կամենումէի ծծմալը կանգնել՝  
չընդունեցին, նիհար է ասացին: Ահա գնացի վա-  
ճառականի կնոջ մօտ, որտեղ մեր ծանօթն է բնա-  
կում, խոստացան ընդունել, բայց ասացին որ  
միւս շաբաթ գնամ: Նատ հեռու է բնակվում,  
յօդնեցալ բոլորովին: Ննորհակալեմ, տան տիրու-  
հին մեզ խղճում է և ի սէր Քրիստոսի ձրի բնակ-  
վումեմ: Այսպէս թէ չէր եղել, չգիտէի թէ ինչ  
պէտքէ անէի:

Հառաչեց Ավդէիչը և ասաց: Միթէ տաք հա-

գուստ չունիս:

«Եհ, սիրելի, էլ ինչ է մնացել, որ ալդ ունենամ:  
Երէկ, վերջինը, թաշկինակս գրաւ դրեցի 20  
կոպէկով:

Կինը մօտեցաւ մահճակալին և երեխին վեր-  
ցրեց, իսկ Ավդէիչը վերկացաւ որոնեց և բերեց  
մի հին վերարկու:

«Վերցրու, թէ և լաւը չէ, բայց փաթաթելու  
պէտք կգալ:

Նայեց կինը վերարկուին, նայեց և ծերին,  
վերցրեց վերարկուն և լաց եղաւ. յետ դարձաւ  
Ավդէիչը մտաւ մահճակալի տակը, դուրս քաշեց  
արկղը, ինչ որ հանեց և եկաւ դարձեալ նստեց  
կնոջ գիմացը:

Կինը ասաց, Քրիստոսը քեզ փրկի հայրիկ,  
երևի նախնձուղարկեց քո լուսամուտի մօտ. թէ չէ  
երեխէս կսառչել ցրտից: Տանից դուրս եկած  
ժամանակ տաք էր, իսկ այժմ ինչպէս ցրտեց: Երե-  
ւի նա քեզ խրատեց որ լուսամուտից նայեցիր և  
թշուառիս խղճացիր:

Ծիծաղեց Ավդէիչը և ասաց»

«Ելի որ նա խրատեց, իզուր խօմ չէի նայում:

Մարտինը ալդ կնոջն էլ սկսեց պատմել իւր  
երազը և ինչպէս ձայն լսեց, որը խոստանում էր  
թէ ալսօր Տէրը պէտքէ դալ իւր մօտ:

Այսն բան կարելի է, ասաց կինը. կանչնեալ առաջա-



վերաբկուն ձգեց իւր ուսերի վրան, երեխին էլ մէջը փաթաթեց և գլուխ տալով շնորհակալութիւն արեց ծերին:

«Ընդունիր ի սէր Քրիստոսի, ասաց նրան Ավ- դէիչը և տուեց 20 կոպէկ, թաշկինակդ յետ ազա- տիր»:

Երեսը խաչակնքեց կինը, նոյնպէս և Ավդէիչը, և ճանապարհ ձգեց կնոջը:

Դնաց կինը, Ավդէիչն էլ կերաւ ապուրը, հա- ւաքեց սեղանը և նստեց կրկին բանելու: Ինքը բանում է և լուսամուտը չէ մոռանում, կըմթնի թէ չէ, իսկոյն վերև է նայում, թէ ով անցաւ: Անցնում էին ծանօթները, անցնում էին և անծա- նօթները:

Ահա տեսնում է Ավդէիչը, լուսամուտի դի- մացը կանգնեց խնձոր վաճառող պառաւ կինը, ձեռքի զամբիւղումը խնձորներից քիչ էլ էր մնացել, իսկ ուսին դրած ունէր տաշեղներով լցրած պարկը:

Երեկի շինութիւններումն էր հաւաքել և տուն էր տանում, կանգնել էր որ հանգստա- նալ և պարկը մի ուսից միւսին դնի: Զամբիւղը դրեց ցած, որ պարկը ուղղի: Այդ միջոցին որ- տեղից որ էր դուս թուաւ գլխարկը պատառո- տած մի տղալ, զամբիւղից վերցրեց խնձորը և ուզում էր փախչել, բայց պառաւը նկատեց, շուռ

եկաւ և պինդ բռնեց տղալի թևից: Դէս ու դէն թռաւ տղան, ուզում էր ձեռքից դուրս պրծ- նել, բայց պառաւը երկու ձեռքերով պինդ բռնեց, գլխարկը դէն ձգեց և մազերիցն էլ բռնեց, բղաւումէ տղան, հայհոյում է պառաւը:

Շատապով Ավդէիչը ասեղը ցած գցեց և գուրս թռաւ դռնից, սանդուղքումն էլ սալթա- քեց և ակնոցը վայր ընկաւ: Դուս վազեց փողոց Ավդէիչը, պառաւը տղին հայհոյում է և քաշ- քշում և կամենում է տանել ոստիկանի մօտ, իսկ տղէն հակառակվում է: Ես, ասում է, չեմ վերցրել, թող, ընչու ես ծեծում:

Ավդէիչը թողնել տղեց, ինքը բռնեց տղի ձեռքից և ասաց, թող սրան մայրիկ, ներիր՝ ի սէր Քրիստոսի: Ես սրան էնպէս կներեմ, որ իւր կեանքումը չմոռանայ, անպիտանին ոստիկանա- տուն պիտի տանեմ: Ավդէիչը սկսեց պառաւին խնդրել, ներիր՝ ի սէր Քրիստոսի, ուրիշ անդամ էլ չի անի:

Թողեց նրան պառաւը, ուզում էր տղան փախչել, բայց Ավդէիչը բռնեց նրան և ասաց, աներողութիւն խնդրիր մայրիկիցը, և միւս ան- գամ չանես, ես տեսայ որ դու վերցրիր:

Լաց եղաւ տղան և սկսեց ներողութիւն խնդրել: Այդպէս, իսկ այժմ վերցրու, այս խնձորը քեզ:

Ավդեհչը վերցրեց զամբիւղիցը և տվեց տղին:  
«Կվճարեմ, մայրիկ, ասաց նա պառաւին:  
«Ալդպիսով դրանցը աւելի կփշացնես, ասաց  
պառաւը: Դրան էնպէս պէտքէ անել, որ ամբողջ  
շաբաթ նստել չկարողանալ:

«Եհ, մայրիկ, մայրիկ, ասաց Ավդեհչը, մեզ  
համար այդպէս է, իսկ Աստուծոյ համար ոչ:  
Եթէ սրան մի խնձորի համար ծեծել է հար-  
կաւոր, բայ մեր մեղքելի համար մեզ ինչ  
պէտքէ անեն:

Լոեց պառաւը:

Պատմեց Ավդեհչը պառաւին մի քանի օրի-  
նակներ, թէ ինչպէս Աստուած հրամայումէ  
ներել ամենքին, առաւել ևս չհասկացողներին。  
Գլուխը շարժեց պառաւը և հառաչեց:

«Ալդ այդպէս է, բայց շատ փշացած են ասաց  
պառաւը: Այդպէս է բայց մենք ծերես պէտքէ  
դրանց սովորեցնենք ասաց Ավդեհչը:

«Ես էլ այդպէս եմ ասում, ասաց պառաւը,  
ես էլ ունէի եօթը դրանց պէս, այժմ միայն մի  
աղջիկ է մնացել: Եւ սկսեց պատմել պառաւը,  
թէ որտեղ և ինչպէս է նա ապրում աղջկայ  
մօտ և թէ քանի թռուներ ունի:

Ահա, ասաց, ոյժո ինչպիսի է, բայց դարձեալ  
աշխատում եմ. թռոնիկներիս խղճումեմ, և շատ  
էլ լաւերն են, ոչոք ինձ էնպէս չի հանդիպի

ինչպիս նրանք:

Աքսիւտկէն խօմ բացի ինձանից ոչոքի մօտ  
չի գնում:

Տատիկ սիրելի է միշտ կանչում:

Պառաւը բոլորովին փափկեց: Յայտնի է երե-  
խտնց արարմունքը, Աստուած դրա հետ ասաց  
պառաւը տղայի վրա:

Հէնց որ կամենում էր պառաւը պարկը դնել  
ուսին, մօտ վաղեց տղան և ասաց: Տուր ես  
կտանեմ, մայրիկ, իմ ճանապարհուէլ այդ կողմն է:

Պառաւը գլուխը շարժեց և տղան շալակեց  
պարկը: Միասին գնացին նրանք փողոցով, այն  
էլ մոռացաւ պառաւը, որ Ավդեհչից խնձորի փո-  
ղը պահանջէր: Ավդեհչը կանգնել էր և նրանց  
լետերից նայում և լսում էր թէ ինչպէս են մի-  
ասին գնում և ինչոր խօսում էին:

Ավդեհչը նրանց ճանապարհ ձգեց և ինքը  
վերադարձաւ, ակնոցները գտաւ սանգուղքների  
վրայ և չէին կոտրվել, վերցրեց ասեղը և նստեց  
կըկին աշխատելու:

Քիչ ժամանակ աշխատեց, էլ լաւ տեսնել  
չէր կարողանում, տեսնումէ լապտերներ վառողը  
անցաւ փողոցի լապտերները վառելու: Երեսումէ  
պէտքէ ճրագ վառել, մտածեց նա, վառեց ճրագը,  
կախեց և կրկին ձեռք տվեց գործին: Մի կոշիկ  
բոլորովին վերջացրեց, ամեն կողմից նայեց, հաւ-

անեց։ Հաւաքեց գործիքները. աւելեց յատակը, ճրագը գրեց սեղանի վրայ, պահարանից հանեց Աւետարանը, կամենում էր բացանել գրքի այնտեղը, ինչտեղ գիշերը նշանի համար կաշու կտոր էր գրել, բայց բացուեց ուրիշ տեղ։ Եւ հենց որ բացեց Ավդեիչը Աւետարանը, իրիկուան երազը միտքն ընկաւ, յիշելուն պէս, լսեց, իբր թէ ով որ շարժվումէ և իւր ետևը քայլում։ Ավդեիչը յետ նայեց և տեսնում է, մութ անկիւնում մարդիք են կանգնած, բաց չե կարողանում որոշել թէ ովքեր են։ Եւ ականջում ձայն է շնչում։ «Մարտին, Մարտին, արդեօք դու ինձ չճանաչեցիր։

«Ումը, խօսեց Ավդեիչը։  
Ինձ,—պատասխանեց ձայնը։—Ծանիր, այս եմ։

Առաջ եկաւ մութ անկիւնից Ստեփանիչը, ժպտաց, ինչպէս ամպ ցրուեց և էլ չերեաց։

«Այդ էլ ես եմ, ասաց ձայնը։  
Նոյնպէս առաջ եկաւ մութ անկիւնից կինը, մանկանը գրկած, ժպտաց կինը. ծիծաղեց մանուկը և նոյնպէս անլայտացան։

«Այդ էլ ես եմ, կրկնեց ձայնը. առաջ եկաւ պառաւը և տղան խնձորով, երկուսն էլ ժպտացին և նոյնպէս անլայտացան։


Աւրախացաւ Ավդեիչը, խաչակնքեց երեսը,


ակնոցները գրեց աչքերին և սկսեց կարդալ Աւետարանը-այնտեղ, որ տեղ բացուեց։ Եւ այն երեսի վերև կարդաց։ «Զի քաղցեալ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցի և արբուցիք ինձ, օտար էի և ժողովեցիք զիսօ։

Երեսի ներքև ևս կարդաց։  
«Որովհետեւ արարիք միում լեզբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք։ (Մասթէոսի ԻԵ գլուխ) Հասկացաւ Ավդեիչը, որ տեսիլքը իրան չէ խաբել, և թէ իսկապէս եկելէ այն օրը իւր մօտ իւր Փրկիչը, և թէ իսկապէս ընդունեց նրան։

Վ Ե Ր Զ.







ՀՀ Ազգային գրադարան



NL0325144

